

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՍՊԸ Հիմնադրի հոգաբարձուների խորհրդի 22.03.2010թ. թիվ 1 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Կենտրոնական բանկում

ՓՈՓՈԽՎԱԾ Է

- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՍՊԸ հիմնադրի հոգաբարձուների խորհրդի 01.12.2010թ. որոշմամբ
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՍՊԸ ընդհանուր ժողովի 30.01.2012թ. թիվ 25 որոշմամբ
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի 23.03.2012թ. թիվ 2 որոշմամբ
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի 28.03.2013թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 03)
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի 06.05.2014թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 04)
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի 31.10.2014թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 06)
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի 04.08.2016թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 03)
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ ընդհանուր ժողովի 30.10.2020թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 03)
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ տարեկան ընդհանուր ժողովի 28.06.2021թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 01)
- «ԿԱՍՈՒՐՁ» ՈՒՎԿ ՓԲԸ միակ բաժնետիրոջ բաժնետերերի արտահերթ ժողովի 21.02.2025թ. որոշմամբ (Արձանագրություն թիվ 01)

Տնօրեն՝

Ալեքսանդր Տերյան



ՀՀ Կենտրոնական բանկի
նախագահ՝

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

«ԿԱՍՈՒՐՁ» ունիվերսալ վարկային կազմակերպություն
փակ բաժնետիրական ընկերության

Երևան 2025

APPROVED

By Decision No. 1 of the Board of Trustees of the
Founder of "KAMURJ" UCO LLC dated 22.03.2010

REGISTERED

at the Central Bank of the RA

AMENDED

- By the decision of the Board of Trustees of the Founder
of "KAMURJ" UCO LLC dated 01.12.2010
- By Decision No. 25 of the General Meeting of
"KAMURJ" UCO LLC dated 30.01.2012
- By Decision No. 2 of the General Meeting of
"KAMURJ" UCO CJSC dated 23.03.2012
- By the decision of the General Meeting of "KAMURJ"
UCO CJSC dated 28.03.2013 (Minutes No. 03)
- By the decision of the General Meeting of "KAMURJ"
UCO CJSC dated 06.05.2014 (Minutes No. 04)
- By the decision of the General Meeting of "KAMURJ"
UCO CJSC dated 31.10.2014 (Minutes No. 06)
- By the decision of the General Meeting of "KAMURJ"
UCO CJSC dated 04.08.2016 (Minutes No. 03)
- By the decision of the General Meeting of "KAMURJ"
UCO CJSC dated 30.10.2020 (Minutes No. 03)
- By the decision of the Annual General Meeting of
"KAMURJ" UCO CJSC dated 28.06.2021 (Minutes No.
01)
- By the decision of the Extraordinary General Meeting of
the Sole Shareholder of "KAMURJ" UCO CJSC dated
21.02.2025 (Minutes No. 01)

Director

Alexander Jeryan



Chairman of the Central Bank of the RA

**CHARTER
(New Edition)**

"KAMURJ" Universal Credit Organization
Closed Joint-Stock Company

Yerevan 2025

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «ԿԱՄՈՒՐՋ» ունիվերսալ վարկային կազմակերպությունն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «**Ընկերություն**») ստեղծվել է «Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ»-ի (գրանցման համար՝ 222.160.00352, վկայական՝ թիվ 03Ա 065337) կողմից իր Հոգաբարձուների խորհրդի 2010թ. մարտի 22-ի որոշմամբ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպարարական կարգավիճակով: «Միկրո ձեռներեցության զարգացման բարեգործական հիմնադրամ»-ի Հոգաբարձուների խորհրդի 2012թ. հունվարի 30-ի որոշմամբ Ընկերությունը վերակազմավորվել է փակ բաժնետիրական ընկերության:
- 1.2. Ընկերության միակ բաժնետեր է հանդիսանում «ԱԺՈՆՍ ՖԻՆՈՆՍ» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցման համար՝ 264.120.1349448, ՀՎՀՀ՝ թիվ 08267626) (այսուհետ՝ «**Բաժնետեր**»):
- 1.3. Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված քանակի բաժնետոմսերի:
- 1.4. Ընկերության իրավունակությունը ծագում է ՀՀ կենտրոնական բանկում (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) գրանցման պահից և դադարում լուծարման վերաբերյալ պետական գրանցամատյանում գրառման պահից:
- 1.5. Ընկերությունն իրավունք ունի իրականացնել ունիվերսալ վարկային կազմակերպության համար սահմանված գործունեություն՝ Կենտրոնական բանկի կողմից համապատասխան գործունեության լիցենզիա ստանալու պահից:
- 1.6. Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ՝ «Ժողով»), Տնօրենների խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ»), Գործադիր մարմնի, Տնօրինության, Վերստուգողի, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների համար:
- 1.7. Ընկերությունն ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն

GENERAL PROVISIONS

KAMURJ" Universal Credit Organization Closed Joint-Stock Company (hereinafter referred to as the "**Company**") was established by the "Microenterprise Development Charitable Fund" (Registration Number: 222.160.00352, Certificate No. 03A 065337) by decision of its Board of Trustees dated March 22, 2010, as a Limited Liability Company. By decision of the Board of Trustees of the "Micro Entrepreneurship Development Charitable Foundation" dated January 30, 2012, the Company was reorganized into a Closed Joint-Stock Company.

The sole shareholder of the Company is "AGENCE FINANCE" Closed Joint-Stock Company (Registration Number: 264.120.1349448, TIN: 08267626) (hereinafter referred to as the "**Shareholder**").

The Company is a commercial entity with the status of a legal entity, whose charter capital is divided into shares in accordance with this Charter.

The Company's legal capacity arises from the moment of its registration at the Central Bank of the Republic of Armenia (hereinafter referred to as the "Central Bank") and terminates upon its dissolution as recorded in the state register.

The Company is entitled to engage in activities permitted for universal credit organizations, provided it obtains the appropriate license from the Central Bank.

The founding document of the Company is this Charter, which is mandatory for compliance by the General Meeting of Shareholders (hereinafter referred to as the "Meeting"), the Board of Directors (hereinafter referred to as the "Board"), the Executive Body, the Management, the Auditor, as well as the heads

The Company has separate property from that of its shareholders, which is

հաշվեկշռում: Բաժնետիրոջ կողմից Ընկերության կանոնադրական կապիտալում ներդրված գույքը, ինչպես նաև Ընկերության կողմից իր գործունեության ընթացքում ձեռք բերված գույքը Ընկերության սեփականությունն է: Ընկերությունը և Բաժնետերը պատասխանատվություն չեն կրում միմյանց պարտավորությունների համար, եթե այդպիսիք չեն ստանձնել օրենքով նշված հանգամանքների ծագմամբ կամ գործարքով:

- 1.8. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքով, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:
- 1.9. Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ «**Օրենսգիրք**»), «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ Օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ Օրենքով (այսուհետ՝ «**Օրենք**»), այլ օրենքներով և իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:
- 1.10. Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.11. Ընկերությունն ունի օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում, խորհրդանիշ, իր ֆիրմային անվանմամբ և խորհրդանշով կլոր կնիք, ինչպես նաև կարող է ունենալ դրոշմներ, ձևաթղթեր, անկյունային դրոշմակնիք, առանձնացված ստորաբաժանումների համարային կնիքներ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացման այլ վավերապայմաններ:
- 1.12. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է՝

- հայերեն՝ «ԿԱՄՐԴՋ» **ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն,**
- անգլերեն՝ “KAMURJ” **universal credit organization closed joint-stock company,**
- ռուսերեն՝ “КАМУРДЖ” **универсальная кредитная организация закрытое акционерное общество:**

accounted for in an independent balance sheet. The property contributed by the Shareholder to the Company's charter capital, as well as any assets acquired by the Company during its operations, are Company's property.

The Company and the Shareholder are not liable for each other's obligations unless otherwise provided by law or contractual agreement.

The Company is liable for its obligations with its **own property**, unless otherwise provided by the **laws of the Republic of Armenia**.

The Company's activities are governed by the Civil Code of the Republic of Armenia (hereinafter referred to as the "**Code**"), the Law on Credit Organizations of the Republic of Armenia, the Law on Joint-Stock Companies of the Republic of Armenia (hereinafter referred to as the "**Law**"), as well as other applicable laws, legal acts, and this Charter.

The Company has the right to acquire and exercise property and personal non-property rights, assume obligations, and act as a plaintiff or defendant in court on its own behalf.

The Company has a registered trade name, emblem, and a round seal bearing its trade name and emblem, in accordance with the law. The Company may also have stamps, letterheads, corner stamps, numerical seals for separate subdivisions, as well as registered trademarks, trade signs, and other means of identification as defined by law.

The full trade name of the Company is:

- In Armenian: «ԿԱՄՐԴՋ» **ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն**
- In English: “KAMURJ” **Universal Credit Organization Closed Joint-Stock Company**
- In Russian: “КАМУРДЖ” **универсальная кредитная**

**организация закрытое
акционерное общество**

- 1.13. Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է՝
հայերեն՝ «ԿԱՄՐՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ,
անգլերեն՝ “KAMURJ” UCO CJSC,
ռուսերեն՝ УКО ЗАО «КАМУРДЖ»

The abbreviated trade name of the Company is:

In Armenian: «ԿԱՄՐՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ

In English: “KAMURJ” UCO CJSC

In Russian: “КАМУРДЖ” УКО ЗАО

- 1.14. Ընկերության գտնվելու վայրն է՝ (գլխամասային գրասենյակի հասցեն)՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կալենցի փողոց, թիվ 11 ոչ բնակելի տարածք (գրասենյակ):

The Company's registered address (head office location) is Republic of Armenia, Yerevan, Kalents Street, non-residential premises (office) no. 11.

**2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ**

**SEPARATED SUBDIVISIONS
OF THE COMPANY**

- 2.1. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների (մասնաճյուղերի և ներկայացուցչությունների) հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից:
- 2.2. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են այդ ստորաբաժանումների կանոնադրությունների և Ընկերության կողմից տրված լիազորագրերի հիման վրա:
- 2.3. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները գործում են Ընկերության անունից:
- 2.4. Ընկերության առանձնացված ստորաբաժանումների գործունեության համար պատասխանատվություն է կրում Ընկերությունը:

Decisions regarding the establishment of separate subdivisions (branches and representative offices) of the Company are made by the Meeting.

The heads of the Company's separate subdivisions are appointed by the Company and operate based on the charters of those subdivisions and the powers of attorney issued by the Company.

The separate subdivisions of the Company operate on behalf of the Company.

The Company is responsible for the activities of the Company's separate subdivisions.

**3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ**

**PURPOSES AND OBJECTIVES OF
THE COMPANY'S ACTIVITY**

- 3.1. Ընկերության գործունեության նպատակն է ունիվերսալ վարկային կազմակերպությունների համար սահմանված գործունեության իրականացման միջոցով շահույթի ստացումը:
- 3.2. Ընկերությունը Կենտրոնական բանկի կողմից տրված վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա և դրա շրջանակներում կարող է իրականացնել

The purpose of the Company's activity is to generate profit through the implementation of activities permitted for universal credit organizations.

Based on and within the scope of the license issued by the Central Bank, the Company may carry out all financial operations permitted by the legislation of

ՀՀ օրենսդրությամբ ունիվերսալ վարկային կազմակերպություններին թույլատրված բոլոր ֆինանսական գործառնությունները:

3.3. Ընկերության և հաճախորդների միջև փոխհարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ և կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ ու կողմերի միջև կնքված պայմանագրերով:

3.4. Ընկերությունը կարող է իրականացնել հետևյալ ֆինանսական գործառնությունները.

3.4.1. իր բաժնետերերից, Հայաստանի Հանրապետությանից և համայնքներից, այլ պետություններից, միջազգային կազմակերպություններից, իրավաբանական անձանցից, անհատ ձեռնարկատերերից ներգրավել փոխառություններ և (կամ) նրանց հետ կնքել նմանատիպ գործարքներ,

3.4.2. տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,

3.4.3. տրամադրել երաշխիքներ,

3.4.4. թողարկել արժեթղթեր, ածանցյալ ֆինանսական գործիքներ, ինչպես նաև արժեթղթերով և ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարել,

3.4.5. մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,

3.4.6. մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային կառավարում,

3.4.7. պետական պարտատոմսերի շուկայում իրականացնել մասնագիտացված գործունեություն (դիլերային, բրոքերային, գործակալական, ենթապահառուական),

3.4.8. գնել և վաճառել արտարժույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտարժույթի ֆյուչերսներ և նման այլ գործարքներ,

3.4.9. իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),

3.4.10. գնել, վաճառել և կառավարել թանկարժեք մետաղների բանկային ձուլակտորներ և մետաղադրամ,

3.4.11. ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,

the Republic of Armenia for universal credit organizations.

The relations between the Company and its clients are contractual in nature and are regulated by the legislation of the Republic of Armenia and the contracts signed between the parties.

The Company may carry out the following financial operations:

Attract loans and/or conclude similar agreements with its shareholders, the Republic of Armenia and its communities, other states, international organizations, legal entities, and individual entrepreneurs.

Provide credits, loans, finance debt or trade transactions, and engage in factoring.

Provide guarantees.

Issue securities, derivative financial instruments, as well as conduct transactions with securities and derivative financial instruments.

Provide payment and settlement services related to the activities of a credit organization.

Provide financial agent (representative) services, manage third-party investments, and engage in fiduciary management.

Conduct specialized activities in the government securities market (dealer, broker, agent, and sub-custodian).

Buy and sell foreign currency, including concluding dram and foreign exchange futures and similar transactions.

Carry out financial leasing.

purchase, sell and manage bank gold and standardized bullions and coin Buy, sell, and manage banking bullion and coins of precious metals.

Withhold precious metals, gemstones, jewelry, securities, documents, and other valuables for safekeeping.

- | | |
|--|---|
| <p>3.4.12. մատուցել ֆինանսական խորհրդատվություն,</p> <p>3.4.13. ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ,</p> <p>3.4.14. իրականացնել պարտքերի հետստացման գործունեություն,</p> <p>3.4.15. Կենտրոնական Բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:</p> <p>3.5. Ընկերությունը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:</p> <p>3.6. Ընկերությունը կարող է հրապարակային օֆերտաների միջոցով ներգրավել փոխառություններ:</p> <p>3.7. Օրենքի IX գլխով նախատեսված շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման կարգը Ընկերության կողմից չի կիրառվում:</p> | <p>Provide financial consultation.</p> <p>Establish and maintain a credit information system for clients.</p> <p>Conduct debt collection activities.</p> <p>With the approval of the Central Bank, carry out financial operations accepted in international practice for credit organizations.</p> <p>The Company conducts financial operations both in dram and as well as in foreign currencies, in accordance with the requirements of Armenian legislation.</p> <p>The Company may attract loans through public offers.</p> <p>The procedure for concluding transactions in the presence of interest, as specified in Chapter IX of the Law, does not apply to the Company.</p> |
|--|---|

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ՖՈՆԴԵՐԸ

COMPANY'S CHARTER CAPITAL AND FUNDS

- | | |
|---|--|
| <p>4.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:</p> <p>4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,000,000,000 (հինգ միլիարդ) ՀՀ դրամ:</p> <p>4.3. Ընկերության կանոնադրական կապիտալը բաժանված է 20,000 (քսան հազար) հատ սովորական բաժնետոմսերի (տեղաբաշխված բաժնետոմսեր), յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:</p> <p>4.4. Ընկերությունը կարող է Ժողովի որոշմամբ փոփոխել կանոնադրական կապիտալի, ինչպես նաև հայտարարված բաժնետոմսերի չափը:</p> <p>4.5. Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը: Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխումը իրականացնում է փակ եղանակով:</p> | <p>The Company's charter capital consists of the nominal value of the shares acquired by the shareholders.</p> <p>The Company's charter capital amounts to 5,000,000,000 (five billion) Armenian drams (AMD).</p> <p>The Company's charter capital is divided into 20,000 (twenty thousand) common shares (allocated shares), with a nominal value of 250,000 (two hundred fifty thousand) AMD per share.</p> <p>The Company may, by decision of the Meeting, amend the amount of the charter capital as well as the number of declared shares.</p> <p>The Company has the right to increase its charter capital by increasing the nominal value of shares or by issuing additional shares. The distribution of additional shares is carried out through private offering.</p> |
|---|--|

- 4.6. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարումները կարող են կատարվել ՀՀ օրենսդրությամբ թույլատրված ձևերով:
- 4.7. Ընկերությունը ստեղծում է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ) կանոնադրական կապիտալի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որը ձևավորվում է զուտ շահույթի հաշվին: Մինչև գլխավոր պահուստի լրիվ համալրումը տարեկան զուտ շահույթից գլխավոր պահուստին մասհանումների նվազագույն չափը չի կարող պակաս լինել տվյալ տարվա տարեկան զուտ շահույթի 5 (հինգ) տոկոսից:
- 4.8. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:
- 4.9. Ընկերության կողմից կարող են ստեղծվել նաև այլ հիմնադրամներ, որոնք նպատակ ունեն նպաստելու Ընկերության հետագա զարգացմանը և նրա աշխատակիցների սոցիալ-տնտեսական պահանջմունքների բավարարմանը:

Payments for the Company's shares may be made in forms permitted by Armenian legislation.

The Company establishes a reserve fund (main reserve) equal to 15 (fifteen) percent of the charter capital, which is formed from the net profit. Until the full formation of the main reserve, the minimum annual allocation from the net profit to the main reserve shall not be less than 5 (five) percent of that year's net profit.

The reserve fund is used to cover the Company's losses, as well as to redeem the Company's bonds and buy back shares, in case the Company's profit and other available resources are insufficient. The reserve fund cannot be used for other purposes.

The Company may also create other funds aimed at supporting its further development and meeting the socio-economic needs of its employees.

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

- 5.1. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային կամ ոչ փաստաթղթային ձևի անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր: Ընդ որում, բաժնետոմսերի թողարկման փաստաթղթային ձևը բաժնետոմսերի հավաստագիրն է:
- 5.2. Բաժնետոմսերի հավաստագիրն անվանական արժեքի տեր է, որը հավաստում է Ընկերության մեկ կամ մի քանի բաժնետոմսերի նկատմամբ դրանց տիրապետողի (տիրապետողների) սեփականության իրավունքը: Բաժնետիրոջը տրվում են առանձին հավաստագրեր՝ հասարակ և արտոնյալ բաժնետոմսերի առանձին տեսակների համար: Հավաստագրերը տրվում են բաժնետոմսերի արժեքը վճարելուց հետո: Բաժնետոմսերի հավաստագիր տալու, այն փոխարինելու և չեղյալ ճանաչելու կարգը սահմանվում է օրենքով և այլ իրավական ակտերով: Հավաստագիրը պետք է համապատասխանի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված արժեթղթերի պաշտպանվածության պահանջներին:

COMPANY'S SHARES AND OTHER SECURITIES

The Company may issue and distribute registered shares and bonds, either in documentary or non-documentary form. In the case of documentary shares, the share certificate serves as proof of ownership.

A share certificate is a registered security that confirms the ownership right of its holder (holders) over one or more shares of the Company. Shareholder is provided with separate certificates for separate types of ordinary and preferred shares. Certificates are provided after the full payment of the shares. The procedure for issuing, replacing, and cancelling share certificates is regulated by law and other legal acts. The certificate must comply with the requirements for the protection of securities defined by law and other regulations.

- 5.3. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ արժեթղթեր:
- 5.4. Ընկերությունը կարող է թողարկել հասարակ, ինչպես նաև մեկ կամ մի քանի տեսակի արտոնյալ բաժնետոմսեր: Ընկերության թողարկված արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի քսանհինգ տոկոսը:
- 5.5. Ընկերության բաժնետոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումը Ընկերության կողմից հանձնվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով Ընկերության հետ փոխկապակցված անձ չհամարվող մասնագիտացված կազմակերպության, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր:

The Company may issue and distribute other securities as permitted by Armenian legislation.

The Company may issue ordinary shares as well as one or more types of preferred shares. The total nominal value of the preferred shares issued by the Company must not exceed twenty-five percent of its charter capital.

The management of the Company's shareholder registry is assigned to a specialized organization that is not affiliated with the Company within the meaning of the RA Law on Securities Market, and which has right, in accordance with the Armenian legislation, to maintain the register of owners (holders) of registered securities.

6. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1. Հասարակ բաժնետոմսի սեփականատերը Օրենքի և սույն Կանոնադրության համաձայն իրավունք ունի՝
- 6.1.1. մասնակցել Ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
- 6.1.2. մասնակցել Ընկերության կառավարմանը,
- 6.1.3. ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից,
- 6.1.4. առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե Օրենքով և սույն Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ,
- 6.1.5. ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին հաշվետվություններին, Ընկերության գործունեությանը,
- 6.1.6. Ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,
- 6.1.7. հանդես գալ առաջարկություններով Ժողովում,
- 6.1.8. Ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով,

SHAREHOLDERS' RIGHTS AND OBLIGATIONS

An ordinary share owner, in accordance with the Law and this Charter, has the right to:

Participate in the Meeting with voting rights on all matters within its competence,

Take part in the Company's management,

Receive dividends from the profits generated by the Company's activities.

Have the preemptive right to acquire newly issued shares of the Company unless otherwise provided by Law or this Charter,

Obtain any information regarding the Company's activities, including reviewing accounting balance sheets, reports, and the Company's activities, except for confidential documents.

Authorize a third party to represent their interests at the Meeting,

Submit proposals at the Meeting,

Vote at Meetings in proportion to the votes of the shares owned by them,

6.1.9. դիմել դատարան՝ Ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,

6.1.10. Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,

6.1.11. ունենալ սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

6.2. Հասարակ բաժնետոմսերի սեփականատիրոջը չի կարող տրամադրվել նրան պատկանող հասարակ բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք: Հասարակ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:

6.3. Հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է Ժողովը:

7. ԾԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

7.1. Ընկերությունն իրավունք ունի որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

7.2. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության գուտ շահույթից (կուտակված շահույթից):

7.3. Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ժողովը՝ Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

To appeal to the court for the purpose of challenging the decisions adopted by the Meeting that contradict applicable laws or other legal acts,

In the event of the Company's liquidation, receive their entitled share of the Company's assets,

Exercise any other rights provided by this Charter.

An owner of the ordinary shares cannot be granted additional voting rights beyond those derived from the nominal value and quantity of their shares. The Company does not guarantee dividend payments on ordinary shares.

Owners of ordinary shares must not disclose confidential information regarding the Company's activities. The list of confidential information is determined by the Meeting.

PAYMENT OF DIVIDEND

The Company has the right to decide (declare) on the payment of quarterly, semi-annual, or annual dividends on allocated shares.

Dividends are paid from the Company's net profit (accumulated profit).

The decision regarding the payment of interim dividends (quarterly and semi-annual), their amount and payment method, based on the types and classes of shares, is made by the Board. The decision on annual dividends, including their amount and payment method, based on the types and classes of shares, is made by the Meeting based on the Board's recommendation. The amount of interim dividends cannot exceed 50% of the dividends distributed based on the previous financial year's results. The amount of annual dividends cannot be higher than the amount proposed by the Board and cannot be lower than the already paid interim dividends.

7.4. Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել առանձին տեսակների և դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու, իսկ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, որոնց համար վճարվող շահութաբաժնի չափը սահմանված է կանոնադրությամբ, նաև շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին:

7.5. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր անց:

7.6. Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերությանն արգելվում է որոշում ընդունել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերով շահութաբաժինների վճարման մասին:

8. ԺՈՂՈՎ

8.1. Ժողովն Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան Ժողով: Առաջին տարեկան Ժողովը գումարվում է առաջին ֆինանսական տարվա ավարտից հետո:

8.2. Ժողովի որոշումները ընդունվում են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր հանդիսացող իրավաբանական անձի կանոնադրությամբ նման լիազորություններ ունեցող մարմնի կողմից:

8.3. Տարեկան Ժողովը գումարվում է Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Տարեկան Ժողովից բացի գումարվող Ժողովները համարվում են արտահերթ:

8.4. Ժողովի որոշումները կարող են ընդունվել նաև հեռակա քվեարկության կարգով, բացառությամբ Օրենքով արգելված դեպքերի:

8.5. Ժողովի իրավասությանն են պատկանում

8.5.1. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

8.5.2. Ընկերության վերակազմակերպումը,

8.5.3. Ընկերության լուծարումը,

The Meeting has the right to decide not to pay dividends on certain types and classes of shares, and for preferred shares, where the dividend amount is specified in the Charter, the Meeting may also decide to issue only a partial dividend payment.

The payment deadline for annual dividends is determined by the Meeting's decision on dividend payments. The payment deadline for interim dividends is set by the Board's decision but it cannot be earlier than 30 days from the date of the decision.

In cases provided by Law, the Company is prohibited from making decisions (declaring) on the payment of dividends on allocated shares.

THE MEETING

The Meeting is the highest governing body of the Company. The Company is required to hold an annual Meeting of shareholders every year. The first annual Meeting is held after the completion of the first financial year.

The decisions of the Meeting are made by the body authorized by the charter of a legal entity that owns or is the named owner of the Company's voting shares.

The annual Meeting is held within six months after the end of the Company's financial year. Any Meeting held in addition to the annual Meeting is considered an extraordinary Meeting.

The decisions of the Meeting may also be made through absentee voting, except in cases prohibited by law.

The powers of the Meeting include:

Approval of the Company's Charter, amendments and additions to it, and approval of the Charter in a new edition.

Reorganization of the Company.

Liquidation of the Company.

8.5.4. Ընկերության ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

Approval of the Company's summary, interim, and liquidation balance sheets, and appointment of a liquidation commission.

8.5.5. Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, լիազորությունների ժամկետի սահմանումը, խորհրդի նախագահի և անդամների աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը, վերջիններիս նկատմամբ խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում Խորհրդի նոր անդամը նշանակվում է ազատված անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով, եթե այդ ժամկետը ավել է 1 (մեկ) տարուց: Եթե Խորհրդի ազատված անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետը պակաս է 1 (մեկ) տարուց, ապա Խորհրդի նոր անդամը նշանակվում է Ժողովի որոշմամբ որոշված ժամկետով, սակայն ոչ պակաս քան 1 (մեկ) տարի ժամկետով,

Determination of the number of Board members, election of its members, and early termination of their powers, as well as determining the duration of their term, defining the terms of remuneration for the Board chairman and members, and applying incentives and disciplinary measures to them. The determination of the number of Board members and their election are discussed exclusively in annual Meetings. The issue of electing Board members may be discussed at an Extraordinary Meeting if the latter decides to terminate the powers of the Board or its individual members prematurely. If a Board member's powers are terminated prematurely, a new member is appointed for the remaining term of the dismissed member, provided that the remaining term exceeds one (1) year. If the remaining term is less than one (1) year, the new member is appointed for a period determined by the Meeting's decision but not less than one (1) year.

8.5.6. հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

Setting the maximum volume of authorized shares.

8.5.7. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով (հայտարարված բաժնետոմսերի սահմաններում) կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,

Increasing the charter capital by raising the nominal value of shares or by issuing additional shares (within the limits of authorized shares).

8.5.8. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռքբերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,

Decreasing the charter capital by reducing the nominal value of shares, reducing the total number of shares distributed by the Company, or redeeming shares acquired or repurchased by the Company.

8.5.9. Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, նրա աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:

Formation of the Company's executive body (either a sole or collegial body), early termination of its powers, and determining the conditions of its remuneration.

8.5.10. Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) ընտրությունը և նրա (նրանց) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը: Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում: Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) ընտրության հարցն արտահերթ Ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

8.5.11. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

8.5.12. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ժողովներում բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,

8.5.13. Օրենքի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

8.5.14. Ժողովի վարման կարգի հաստատումը,

8.5.15. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ՝ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով,

8.5.16. բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

8.5.17. Ընկերության տնօրենի ներկայացմամբ՝ Ընկերության տնօրենի տեղակալ(ներ)ի և գլխավոր հաշվապահի նշանակումը, Տնօրինության կազմի սահմանումը: Ժողովի իրավասությունն է նաև վերջիններիս վարձատրության պայմանների հաստատումը, գործառույթների և լիազորությունների սահմանումը՝ համաձայն Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի: Ընկերության Ժողովն իրավասու է

Election of the Company's controller (or members of the control committee) and early termination of their powers, as well as determining the conditions of their remuneration. The election of the Company's controller (or members of the control committee) is discussed exclusively in annual Meetings. An extraordinary Meeting may discuss the election of the Company's controller (or members of the control committee) if it decides on the early termination of their powers or those of individual members.

Approval of the person conducting the Company's audit.

Approval of the Company's annual reports, accounting balance sheets, profit and loss statements, profit and loss distribution, adoption of a decision on the payment of annual dividends, and approval of the amount of annual dividends. These matters are discussed exclusively in annual Meetings, except as provided by Law.

Adoption of a decision not to apply the Company's preemptive right to acquire the Company's shares or other securities convertible into shares, in accordance with the Law.

Approval of the rules for conducting the Meeting.

Determination of the method by which the Company communicates information and materials to shareholders, including selecting the appropriate mass media channel if the information must be published as a public announcement.

Consolidation and splitting of shares.

Based on the proposal of the Company's director, the appointment of the deputy director(s) and chief accountant, as well as the determination of the composition of the Management. The Meeting is also authorized to approve their remuneration conditions, define their functions and powers in accordance with the Company's organizational structure. The

ցանկացած ժամանակ լուծելու Ընկերության տնօրենի տեղակալ(ներ)ի և գլխավոր հաշվապահի հետ կնքված աշխատանքային պայմանագրերը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, գործադրների կնքման մասին որոշման ընդունումը՝ կիրառելի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Company's Meeting has the authority to terminate the employment contracts of the Deputy Director(s) and Chief Accountant at any time, following the procedure established by Armenian legislation, adoption of decisions regarding transactions in cases prescribed by applicable law.

8.5.18. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետզումը՝ կիրառելի օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,

Acquisition and buyback of shares placed by the Company, in cases prescribed by applicable law.

8.5.19. դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,

Establishment of subsidiaries or dependent companies.

8.5.20. դուստր, կախյալ և այլ ընկերությունների մասնակցությունը,

Participation in subsidiaries, dependent, and other companies.

8.5.21. հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների հիմնադրումը,

The establishment of holding companies and other unions of commercial organizations.

8.5.22. հոլդինգային ընկերություններում, առևտրային կազմակերպությունների այլ միություններում մասնակցությունը,

Participation in holding companies0 and other unions of commercial organizations.

8.5.23. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում և կարգով որոշումների ընդունումը,

Adoption of decisions in cases and procedures defined by the Law of the Republic of Armenia on the "Securities Market".

8.5.24. Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների, այդ թվում վարկերի տոկոսադրույքների, կոմիսիոն վճարների, սակագների սահմանումը, սահմանված սակագներից տարբերվող արտոնյալ սակագների կիրառմանը համաձայնության տրամադրումը, Ընկերության հիմնադրամների այդ թվում նաև պահուստային հիմնադրամի ստեղծումը,

Determination services provided by the Company, as well as the tariffs, commission fees, interest rates on loans, approval of preferential rates different from the established tariffs, establishment of the Company's funds, including the reserve fund.

8.5.25. Ընկերության Տնօրինության քանակական կազմի, անդամների նշանակումը, Տնօրինության գործառնությունների, գործառնությունների, դրանց իրականացման ձևի և կարգի սահմանումը,

Determination of the quantitative composition of the Company's Management, appointment of its members, definition of the functions, operations, implementation methods, and procedures of the Management.

8.5.26. Ընկերության ներքին կանոնակարգերի հաստատումը (որոնց հաստատման իրավասությունը չի պատկանում Բորիքին),

Approval of the Company's internal regulations (which do not fall under the competence of the Board).

8.5.27. Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Adoption of other decisions as prescribed by the Law and this Charter.

8.6. Ժողովի՝ Օրենքով սահմանված բացառիկ իրավասությունները չեն կարող նրա կողմից փոխանցվել այլ մարմնի, եթե այլ բան նախատեսված

The exclusive powers of the Meeting defined by the Law cannot be delegated to another body unless otherwise provided

չէ Օրենքով: Օրենքով թույլատրված դեպքերում ժողովի բացառիկ չհամարվող իրավասությունները կարող են ժողովի որոշմամբ փոխանցվել Ընկերության Խորհրդին:

8.7. Կանոնադրության 8.5.27 և 11.4 կետերում նշված տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից ժողովին ներկայացվող հաշվետվությունների ձևերի և բովանդակության նկատմամբ ներկայացվող պահանջները հաստատում է ժողովը:

8.8. Ժողովում ձայնի իրավունքից օգտվում են Ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

8.9. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

8.10. Ժողովի վարման կարգը սահմանվում է ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:

8.11. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

8.12. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

8.12.1. Ընկերության հասարակ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով,

8.12.2. Ընկերության բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

8.12.3. Ընկերության վերստուգողը (վերստուգող հանձնաժողովի անդամները),

8.12.4. Ընկերության աուդիտն իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում),

8.12.5. ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

8.13. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի

by the Law. In cases permitted by law, the Meeting may delegate its non-exclusive powers to the Board.

The requirements regarding the format and content of the reports presented to the Meeting by the Director and Chief Accountant, as specified in clauses 8.5.27 and 11.4 of the Charter, are approved by the Meeting.

Voting rights in the Meeting are exercised by shareholders who own the Company's ordinary shares, except as otherwise provided by Law.

Decisions of the Meeting are made by a simple majority of votes of shareholders participating and voting, unless a higher number of votes is required by the Law.

The procedure for conducting the Meeting is determined by internal documents approved by the Meeting.

Information about decisions made at the Meeting, as well as voting results, must be communicated to the Company's shareholders within 45 days from the date of adoption of these decisions.

The right to participate in the Meeting is granted to:

Shareholders who own the Company's ordinary shares (registered shareholders) in accordance with the number of shares they own and their nominal value.

Members of the Board and the executive body who are not shareholders of the Company, with advisory voting rights.

The Company's controller (members of the control commission).

The person conducting the Company's audit (if their opinion is included in the materials of the convened Meeting).

Representatives of the Central Bank of Armenia as observers.

The list of shareholders entitled to participate in the Meeting is compiled as

կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան ժողովի գումարումից 60 օրից ավելի: Եթե Ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է Ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

8.14. Սույն Կանոնադրության 8.12 կետում նշված անձինք ծանուցվում են Ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու, էլեկտրոնային փոստի կամ ֆաքսի միջոցով, Ժողովի նիստից առնվազն 2 օր առաջ:

8.15. Ժողովի մասին ծանուցման բովանդակությունը, ինչպես նաև Ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը սահմանվում են Օրենքով:

8.16. Ընկերության բաժնետերեր, որը ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է հանդիսանում, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

8.17. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան Ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն Կանոնադրության 8.16 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում:

8.18. Արտահերթ Ժողովը գումարվում է Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտի իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

of the year, month and date, determined by the Board, based on the data from the Company's shareholders' register. The year, month and date, for compiling the list of shareholders entitled to participate in the Meeting cannot be set earlier than the date of the decision to convene the meeting and no later than 60 days before the meeting. If the Meeting is held by absentee voting, the date, month, and year for compiling the list of shareholders entitled to participate must be set at least 35 days before the Meeting.

The persons mentioned in Clause 8.12 of this Charter shall be notified of the convening of the Meeting by sending them an appropriate written notice, via email, or fax at least 2 days before the Meeting.

The content of the Meeting notice, as well as the information and materials to be provided to shareholders during the preparation of the Meeting, are determined by Law.

A shareholder owning at least 2% of the voting shares of the Company has the right to submit no more than two proposals for the agenda of the annual Meeting within 30 days after the end of the financial year, as well as to propose candidates for the Board and the controller (control committee) membership. The number of proposed candidates cannot exceed the number of members established for these bodies.

The Board is obliged to review the submitted proposals and make a decision on including them in the annual Meeting agenda or on accepting or rejecting the proposed candidates within 15 days after the deadline set in Clause 8.16 of this Charter.

An extraordinary Meeting is convened by the decision of the Board at its own initiative, at the request of the executive body of the Company, the controller (control committee), the person conducting the Company's audit, or a shareholder (shareholders) holding at least 10% of the voting shares of the

Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե արտահերթ ժողովին գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:

Company at the time of the request. The format of the Extraordinary Meeting shall be determined by the decision of the Board on convening an Extraordinary Meeting either with the physical presence of shareholders or through absentee voting. The Board cannot change the format of the Meeting if the request for convening the extraordinary Meeting specifies a particular format.

8.19. Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում Խորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

In the event of a request for convening an extraordinary Meeting submitted by the Company's executive body, the controller (control committee), the person conducting the Company's audit, or a shareholder (shareholders) owning at least 10% of the Company's voting shares at the time of the request, the Board must convene the extraordinary Meeting within 45 days from the date of submission of the request.

8.20. Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին Խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում Խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին, որոշում չի ընդունում, կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք: Նշված դեպքերում արտահերթ ժողովը կարող է որոշում ընդունել փոխհատուցելու ժողովի գումարման հետ կապված ծախսերը՝ Ընկերության միջոցների հաշվին:

The Board must decide whether to convene or reject the extraordinary Meeting within 10 days from the date of the request submitted by the executive body of the Company, the controller (control committee), the person conducting the Company's audit, or shareholder (shareholders) holding at least 10% of the voting shares. If the Board does not make a decision within the specified period or decides to reject the request, the persons who submitted the request have the right to convene the extraordinary Meeting themselves. In such cases, the extraordinary Meeting may decide to reimburse the expenses incurred for convening the Meeting from the Company's funds.

8.21. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Ընկերության բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները ժողովին ներկայանում են առանց լիազորագրի, պահպանելով այդ իրավաբանական անձի կանոնադրության պահանջները:

A shareholder may exercise their right to participate in the Meeting personally or through an authorized representative. The heads of legal entities that are shareholders of the Company may participate in the Meeting without a power of attorney, provided they comply with the requirements of that legal entity's charter.

8.22. Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին

The Meeting is considered valid (has a quorum) if, at the time of the registration's

գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

8.23. Քվեարկությունը ժողովում իրականացվում է "Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն" սկզբունքով:

8.24. Ժողովի արձանագրությունը կազմվում է Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Եթե Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր կամ անվանատեր է հանդիսանում միայն մեկ իրավաբանական անձ, ապա ժողովը նախագահում է այդ իրավաբանական անձի բարձրագույն կառավարման մարմնի նախագահը:

9. ԽՈՐՀՈՒՐԴԸ

9.1. Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են Ժողովի բացառիկ իրավասությանը:

9.2. Խորհրդի անդամ կարող են նշանակվել չափահաս և գործունակ այն ՀՀ և (կամ) օտարերկրյա քաղաքացիները, որոնք բավարարում են խորհրդի անդամի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Խորհրդի անդամները, որպես ֆիզիկական անձինք, չեն կարող միմյանց հետ փոխկապակցված լինել:

9.3. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

9.3.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, այդ թվում՝ Ընկերության ամենամյա բիզնես պլանի և հեռանկարային զարգացման ծրագրերի հաստատումը, դրանցում փոփոխությունների և լրացումների կատարումը,

9.3.2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովի հաստատմանը ներկայացնելը, Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) գործունեության արդյունքների նախնական քննարկումը, Ժողովին առաջարկություններ ներկայացնելու համար,

9.3.3. Ընկերության տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի), ինչպես նաև

closing, shareholders (their representatives) holding more than 50% of the Company's distributed voting shares are registered.

Voting at the Meeting is conducted based on the principle of "one voting share—one vote."

The Meeting minutes must be prepared within 5 days after the Meeting in at least two copies, signed by the Meeting chairman and the secretary. The chairman of the Meeting is responsible for the accuracy of the information recorded in the minutes. If the sole owner of the Company's voting shares is a single legal entity, the Meeting is chaired by the head of the highest governing body of that legal entity.

THE BOARD

The Board carries out the general management of the Company's activities, except for matters reserved for the exclusive authority of the Meeting.

Members of the Board may be appointed from among adult and legally capable citizens of the RA and/or foreign nationals who meet the requirements established by Armenian legislation for Board members. Board members, as natural persons, shall not be affiliated.

The Board has the following powers:

Determining the main directions of the Company's activities, including the approval of the Company's annual business plan and long-term development programs, making amendments and additions to them.

Preliminary approval of the annual financial statements and submission for approval by the Meeting, preliminary discussion of the results of the Company's controller (control committee) activities in order to present recommendations to the Meeting.

Supervising the activities of the Company's Director, the Control

Խորհրդի կողմից սահմանված այլ անձանց գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը, նրանց կողմից սահմանված կարգով ստացված հաշվետվությունների քննարկումը,

9.3.4. Ընկերության տնօրենին և Վերստուգող հանձնաժողովին (Վերստուգողին) հանձնարարականների տրամադրումը,

9.3.5. Օրենքի, սույն կանոնադրության, իրավական այլ ակտերի կամ պայմանագրի պահանջները, ինչպես նաև ժողովի և (կամ) Խորհրդի կողմից տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու (աշխատանքային կարգապահությունը խախտելու) դեպքում Ընկերության տնօրենից, Վերստուգող հանձնաժողովի նախագահից, անդամներից (Վերստուգողից) կարգապահության խախտման մասին գրավոր բացատրության պահանջումը, նրանց նկատմամբ կարգապահական տույժերի (բացառությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու կարգապահական տույժի) կիրառումը, ինչպես նաև նյութական պատասխանատվության կիրառումը: Սույն կետում նշված աշխատանքային կարգապահությունը խախտելու դեպքում, որպես կարգապահական տույժ, Ընկերության տնօրենի, Վերստուգող հանձնաժողովի նախագահի, անդամների (Վերստուգողի) հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու իրավասությունը պատկանում է ժողովին,

9.3.6. Ընկերության տնօրենի և վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի անդամների) հետ աշխատանքային հարաբերություններում (մասնավորապես հանձնարարականներ տալու, Խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ հաշվետվություններ ընդունելու հետ կապված և սույն կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում ու հարաբերություններում) որպես գործատուի ներկայացուցիչ հանդես գալը, բացառությամբ ժողովի իրավասությանը վերաբերող այն հարցերի, որոնք սույն կանոնադրությամբ, վերապահված են բացառապես ժողովին,

9.3.7. Ընկերությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, ժողովի և խորհրդի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը,

9.3.8. Աուդիտորական և այլ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված միջոցառումների պլանի հաստատումը և նրա իրականացման նկատմամբ վերահսկողության իրականացումը,

Committee (Controller), as well as other persons determined by the Board, and reviewing the reports submitted by them in accordance with established procedures.

Providing instructions to the Company's Director and the Control Committee (Controller).

In case of failure to fulfill or improper fulfillment of the requirements of the Law, this Charter, other legal acts or contracts, as well as the instructions given by the Meeting and/or the Board (violation of labor discipline), the authority to demand a written explanation regarding the disciplinary violation from the Company's Director, the Chairman and members of the Control Committee (Controller), to apply disciplinary sanctions (except for the disciplinary sanction of terminating the employment contract), as well as to impose material liability. In the event of a violation of labor discipline as mentioned in this clause, the authority to terminate the employment contract as a disciplinary sanction for the Company's Director, the Chairman, and members of the Control Committee (Controller) belongs to the Meeting.

Acting as the employer's representative in labor relations with the Company's Director and controller (members of the control committee) (particularly in giving instructions, receiving reports at intervals determined by the Board, and in other cases and relations specified by this Charter), except for matters falling under the exclusive authority of the Meeting as defined by this Charter.

Establishing internal control standards within the Company, overseeing the implementation of the decisions of the Meeting and the Board.

Approving an action plan aimed at eliminating violations identified through audits and other inspections and monitoring its implementation.

- | | |
|---|--|
| <p>9.3.9. Տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի,</p> | <p>Convening annual and extraordinary Meetings, except in cases stipulated by Law.</p> |
| <p>9.3.10. Ժողովների օրակարգի հաստատումը,</p> | <p>Approving the agenda of the Meetings.</p> |
| <p>9.3.11. Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը,</p> | <p>Determining the year, month, and date for compiling the list of shareholders eligible to participate in Meetings, as well as resolving all matters related to the preparation and convening of Meetings that fall under the authority of the Board.</p> |
| <p>9.3.12. Պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը, դրանց տեղաբաշխման և մարման կարգի և պայմանների սահմանումը,</p> | <p>Placement of bonds and other securities and determining the terms and conditions of their placement and redemption.</p> |
| <p>9.3.13. Գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով,</p> | <p>Determining the market value of assets in accordance with Article 59 of the Law.</p> |
| <p>9.3.14. Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,</p> | <p>Acquiring the Company's distributed shares, bonds, and other securities in cases prescribed by the Law.</p> |
| <p>9.3.15. Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,</p> | <p>Preparing recommendations for the Meeting regarding the terms and procedures for the remuneration and expense reimbursement of the Company's controller (control committee)</p> |
| <p>9.3.16. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,</p> | <p>Determining the remuneration amount for the Company's auditor.</p> |
| <p>9.3.17. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը և ներկայացումը,</p> | <p>Preparing and submitting recommendations to the Meeting regarding the amount and payment procedure of annual dividends on the Company's shares.</p> |
| <p>9.3.18. Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,</p> | <p>Determining the amount and payment procedure of interim (quarterly or semi-annual) dividends on the Company's shares.</p> |
| <p>9.3.19. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,</p> | <p>Managing the use of the Company's reserve and other funds.</p> |
| <p>9.3.20. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,</p> | <p>Approving internal documents regulating the activities of the Company's governing bodies.</p> |
| <p>9.3.21. Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը, դրանց կանոնադրությունների, ինչպես նաև Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի հաստատումը, նրանց միջև գործառնությունների սահմանազատումը,</p> | <p>Establishing the Company's branches, representative offices, and institutions, approving their charters, as well as the regulations of the Company's structural subdivisions, defining their respective functions.</p> |

- 9.3.22. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքմանը համաձայնություն տալը՝ Օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում,
- 9.3.23. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- 9.3.24. ամենամյա վարչատնտեսական ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- 9.3.25. ամենամյա կապիտալ ներդրումների նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
- 9.3.26. Ընկերության հաստիքացուցակի, այդ թվում աշխատավարձերի նվազագույն և առավելագույն չափերի, ինչպես նաև Ընկերության աշխատողների լրացուցիչ վարձատրության և ֆինանսական աջակցության կարգի ու պայմանների հաստատումը, բացառությամբ այն աշխատողների, որոնց վարձատրության պայմանների որոշումը օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված է Ժողովին,
- 9.3.27. խորհրդի նախագահի ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- 9.3.28. Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ չհակասող իրավասությունների իրականացումը,
- 9.3.29. ամենամյա բիզնես-պլանի կատարման, ինչպես նաև աուդիտորական և այլ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման միջոցառումների պլանների վերաբերյալ տնօրենի հաշվետվության (Խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ) քննարկումը և քննարկման արդյունքներով որոշումների ընդունումը,
- 9.3.30. Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
- 9.4. Խորհրդի՝ օրենքով բացառիկ համարվող իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:
- 9.5. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից՝ Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:
- Approving major transactions related to the acquisition and disposal of the Company's property in cases specified in chapter VIII of the Law.
- Approving the Company's administrative-organizational structure.
- The approval of the annual administrative and operational expense budget and its execution.
- Approving the annual budget for capital investments and reviewing its performance.
- Approving the Company's staffing list, including the minimum and maximum salary ranges, as well as the procedures and conditions for additional remuneration and financial assistance for Company employees, except for those employees whose remuneration conditions are determined by the Meeting according to the law and this Charter.
- Electing the Chairman of the Board and terminating their powers prematurely.
- Exercising powers provided by the Company's internal regulations, which do not contradict the legislation of the RA.
- Reviewing and making decisions based on the Director's reports (at the intervals determined by the Board) regarding the implementation of the annual business plan and the action plan for addressing violations identified through audits and other inspections.
- Resolving other matters as provided by Law and this Charter.
- Matters that are considered exclusive powers of the Board under the law cannot be delegated to the Company's executive body for resolution.
- Board members are elected by the Annual Meeting or an Extraordinary Meeting in case of premature termination of members' powers, in accordance with the procedure and terms established by the Law and this Charter. The powers of the Board members cease upon the election of the next composition of the Board.

9.6. Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում: Ժողովը կարող է որոշում ընդունել Խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

9.7. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի տասը և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին:

9.8. Խորհուրդը բաղկացած է առնվազն 3 (երեք), իսկ առավելագույնը 5 (հինգ) անդամներից:

9.9. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները, Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

9.10. Խորհրդի նախագահը՝

9.10.1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

9.10.2. գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք,

9.10.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:

9.11. Խորհուրդն իր գործունեությունը իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ քան 2 ամիսը մեկ: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել նաև էլեկտրոնային, հեռախոսային, հեռուստացուցային կամ այլ կապի միջոցներով իրական ժամանակի մեջ հաղորդակցվելու միջոցով, ինչպես նաև հեռակա (հարցման) կարգով, բացառությամբ այն հարցերի, որոնք չեն կարող քննարկվել հեռակա կարգով: Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգողի (վերստուգող հանձնաժողովի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է Խորհրդի կանոնակարգով:

9.12. Խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը, խորհրդի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է խորհրդի անցկացման վայրի, ժամանակի մասին, ծանուցման հետ մեկտեղ

The total duration of the Board members' powers is not limited. The Meeting may adopt a decision to terminate the powers of any (or all) Board members prematurely.

The shareholders of the Company who, as of the date of compiling the list of shareholders entitled to participate in the Meeting, own ten percent or more of the Company's distributed voting shares, have the right to be included in the Board without election or to appoint their representative to the Board.

The Board consists of at least **three (3)** and maximum of **five (5)** members.

The Chairman of the Board is elected by the Board members from among their own ranks by a majority vote of the total number of Board members.

The Chairman of the Board:

Organizes the work of the Board,

Convenes the Board meetings and presides over them,

Ensures the recording of meeting minutes.

The Board operates through meetings. Meetings are convened as necessary but no less than once every **two months**. Board meetings may be held electronically, via telephone, video conferencing, or other real-time communication methods, as well as remotely (via polling), except for matters that cannot be decided remotely. The Chairman convenes Board meetings at their own initiative or at the request of a Board member, the Company's controller (control committee), the person conducting the Company's audit, or the Company's executive body. The procedure for convening and conducting Board meetings is defined by the Board's regulations.

An employee of the Company, as determined by the decision of the Board, notifies the Board members of the meeting's location and time via email at least 2 working days prior to the meeting,

ներկայացնելով օրակարգի հարցերին առնչվող նյութերը: Խորհրդի անդամներն իրավունք ունեն ներկայացնել առաջարկներ խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ: Խորհրդի անդամը նիստից բացակայելու դեպքում մինչև խորհրդի նիստի անցկացման օրը պարտավոր է այդ մասին հայտնել խորհրդի նախագահին, նշելով պատճառները:

- 9.13. Խորհուրդն ունի քվորում, եթե նիստին ներկա են Խորհրդի առնվազն 3 (երեք) անդամներ, իսկ Խորհրդի կազմի 3 (երեք) անդամից բաղկացած լինելու դեպքում՝ Խորհուրդն ունի քվորում, եթե նիստին ներկա են Խորհրդի առնվազն 2 (երկու) անդամներ: Ընդ որում, եթե Խորհրդի նիստին ներկա են Խորհրդի անդամներից 2-ը (երկուսը), ապա տվյալ պարագայում որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների միաձայն որոշմամբ: Խորհրդի նիստը բացում է խորհրդի նախագահը կամ նրան փոխարինող անձը, որի առաջարկով էլ հաստատվում է խորհրդի նիստի օրակարգը:
- 9.14. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում կամ պաշտոնական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում նրա պարտականությունների կատարումը խորհրդի որոշմամբ դրվում է խորհրդի անդամներից մեկի վրա:
- 9.15. Խորհրդի նիստերին, որպես կանոն, մասնակցում է տնօրենը՝ խորհրդակցական ձայնի իրավունքով: Խորհրդի կամ տնօրենի առաջարկով խորհրդի նիստերին կարող են հրավիրվել նաև Ընկերության այլ աշխատակիցներ:
- 9.16. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Օրենքով այլ բան նախատեսված չէ: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում: Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:
- 9.17. Եթե խորհրդի նիստը անց է կացվում հեռակա քվեարկության միջոցով, ապա Խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը, խորհրդի նիստից առնվազն 2 աշխատանքային օր առաջ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է խորհրդի անցկացման վայրի, ժամանակի մասին, ծանուցման հետ մեկտեղ ներկայացնելով օրակարգի հարցերին առնչվող նյութերը և հեռակա քվեարկության քվեաթերթիկը: Խորհրդի անդամները հեռակա քվեարկության քվեաթերթիկի համապատասխան վանդակներում կատարում են “Կողմ”, “Դեմ” կամ

and provides materials related to the agenda items along with the notice. Board members have the right to submit proposals regarding the agenda of the meeting. If a Board member cannot attend a meeting, they must inform the Chairman of the Board in advance, specifying the reason for their absence.

The Board has a quorum if at least **three (3)** members are present, or if the Board consists of only **three (3) members**, a quorum is reached if at least **two (2)** members are present. In cases where only **two (2) members** are present at a meeting, decisions must be made unanimously by those present. The meeting is opened by the Chairman of the Board or the person replacing them, who also proposes the approval of the meeting's agenda.

In the absence of the Chairman or if they are unable to perform their duties, the Board shall appoint one of its members to temporarily assume the Chairperson's responsibilities.

The Director typically participates in Board meetings with a consultative voice. At the suggestion of the Board or the Director, other employees of the Company may also be invited to the Board meetings.

Board decisions are made by a **majority vote** of the members present at the meeting unless otherwise provided by the Law. During voting, each Board member has **one vote**. The transfer of voting rights from one Board member to another (or any third party) is prohibited. The Chairman has the **decisive vote**.

If the Board meeting is conducted via absentee voting, a designated Company employee notifies Board members at least two (2) business days in advance via email, providing details about the meeting location and time, along with relevant materials and a ballot for remote voting. Board members must mark their votes as “For,” “Against,” or “Abstain”, sign the ballot, and submit it either by registered mail to the Company's legal address or by

“Ձեռնպահ” նշումներ, ստորագրում են քվեաթերթիկները և պատվիրված նամակով ուղարկում են Ընկերության իրավաբանական հասցեով կամ առձեռն հանձնում են Ընկերության պատասխանատու աշխատակցին:

9.18. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից 5-օրյա ժամկետում: Արձանագրությունում արտացոլվող տեղեկությունների բովանդակությունը և ձևը սահմանվում են Օրենքով: Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.19. Խորհրդի նիստերը հեռակա կարգով անցկացվելու դեպքում խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը, քվեարկված քվեաթերթիկները ստանալուց հետո 5 օրյա ժամկետում դրանց հիման վրա կազմում և ստորագրում է արձանագրությունը՝ կցելով քվեաթերթիկները: Խորհրդի որոշմամբ որոշված Ընկերության աշխատակիցը պատասխանատվություն է կրում արձանագրություններում առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.20. Խորհուրդը Ընկերության գործունեության արդյունավետության բարձրացման, ինչպես նաև իր և տնօրենի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել մշտական կամ ժամանակավոր կոմիտեներ (հանձնաժողովներ), որոնց գործունեությունը կկարգավորվի Ընկերության համապատասխան ներքին փաստաթղթերով:

handing it over in person to the responsible Company employee.

Board meetings are recorded in minutes. The minutes are prepared within five (5) days following the end of the meeting. The content and format of the information reflected in the minutes are determined by law. The minutes of the Board meeting are signed by all the members present at the meeting, who are also responsible for the accuracy of the information contained in the minutes.

In the case of remote Board meetings, an employee of the Company, as determined by the Board, prepares and signs the minutes within 5 days after receiving the voted ballots, attaching the ballots to the minutes. The employee designated by the Board is responsible for the accuracy of the information contained in the minutes.

The Board, in order to improve the efficiency of the Company's operations and to organize the work of itself and of the Director effectively, may establish permanent or temporary committees (commissions), the activities of which will be regulated by the Company's relevant internal documents.

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ

EXECUTIVE BODY OF THE COMPANY

10.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը:

The management of the Company's current activities is carried out by the Company's Director.

10.2. Տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով և սույն Կանոնադրությամբ ժողովի և Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի:

The Director is authorized to manage all matters related to the Company's day-to-day activities, except for issues reserved to the authority of the Meeting and the Board, as defined by the Law and this Charter.

10.3. Տնօրենը կազմակերպում է Ընկերության ընթացիկ գործունեությունը, Ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:

The Director organizes the Company's current activities and ensures the

10.4. Տնօրենը՝

- 10.4.1. Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,
- 10.4.2. ապահովում է խորհրդի կողմից հաստատված ամենամյա բիզնես ծրագրի և հեռանկարային զարգացման պլանների կատարումը,
- 10.4.3. հաստատում է կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ներքին աշխատանքային պլանները,
- 10.4.4. օպերատիվ կերպով վերացնում է սուղիտորական և այլ ստուգումների արդյունքներով կամ այլ հանգամանքներում ի հայտ եկած օրենսդրության խախտումները և թերացումները, դրանց մասին տեղեկություն տրամադրելով խորհրդին,
- 10.4.5. ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
- 10.4.6. գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,
- 10.4.7. ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին ակտերով սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,
- 10.4.8. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,
- 10.4.9. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերի կիրառելիությունն ապահովելու նպատակով ընդունում է Ընկերության ընթացիկ, ամենօրյա գործունեությունը կարգավորող, օպերատիվ դեկլարում պահանջող, կազմակերպչական ու նկարագրողական բնույթ կրող ներքին իրավական ակտեր (նուղեցույցներ և հրահանգներ),
- 10.4.10. Ընկերության սույն կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման

implementation of the decisions of the Meeting and the Board.

The Director:

Manages the Company's property, including financial resources, in accordance with the internal legal acts of the Company, and concludes transactions on behalf of the Company.

Ensures the implementation of the annual business plan and long-term development plans approved by the Board.

Approves the internal work plans of structural and territorial subdivisions.

Promptly addresses legislative violations and deficiencies identified as a result of audits and other inspections or other circumstances, providing information about them to the Board.

Represents the Company in the Republic of Armenia and abroad.

Acts without a power of attorney, grants powers of attorney.

Concludes contracts, including employment contracts, in accordance with the laws of the Republic of Armenia, this Charter, and the internal acts of the Company.

Opens settlement (including foreign currency) and other accounts of the Company in banks.

Submits for approval to the Board the Company's internal work regulations, regulations of separate subdivisions, the organizational structure, staffing table, and ensure the application of internal legal acts approved by the Board by adopting internal legal acts (guidelines and instructions) regulating the Company's daily operations, requiring operational management, and having an organizational and descriptive nature.

Issues orders, instructions, mandatory directives within the scope of his/her authority as defined by this Charter and internal legal acts of the Company and monitor their implementation.

համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

10.4.11 Սույն կանոնադրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով Ընկերության աշխատողների հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ (աշխատանքի ընդունման, աշխատանքային պայմանագրի լուծման, աշխատանքի վարձատրության պայմանների որոշման, խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման, գործուղումների ուղարկման, արձակուրդների տրամադրման, հաշվետվությունների և բացատրությունների ընդունման և այլ հարցերով), բացառությամբ այն աշխատողների, որոնց հետ աշխատանքային հարաբերություններում գործատուի ներկայացուցչի իրավասությունները սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովին, Խորհրդին,

10.4.12 Ընկերության Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և գումարային շեմի սահմաններում կայացնում է որոշումներ վարկերի տրամադրման կամ դրանց մերժման վերաբերյալ,

10.5. Ընկերության տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

10.6. Ընկերության տնօրենը անմիջական պատասխանատվություն է կրում Ընկերության ամենամյա բիզնես պլանի և հեռանկարային զարգացման ծրագրերի կատարման համար:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐ

11.1. Ընկերության Գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով

Acts as the employer's representative in employment relations with the Company's employees in accordance with this Charter and the Company's internal legal acts (including hiring, termination of employment contracts, determining salary conditions, applying incentives and disciplinary measures, sending employees on business trips, granting leaves, receiving reports and explanations, and other matters), except for employees with whom employment relations are reserved to the authority of the General Meeting or the Board by this Charter.

Makes decisions regarding the granting or rejection of loans in accordance with the procedure established by the internal legal acts approved by the Company's Board and within the specified monetary threshold.

The Director of the Company is responsible for organizing the Company's accounting, its state and reliability, the annual report, and the timely submission of financial and statistical reports to state authorities as required by laws and other legal acts, as well as for the accuracy of information provided about the Company to its shareholders, creditors, and the media, ensuring compliance with the law, other legal acts, and this charter.

The Company's Director bears direct responsibility for the implementation of the Company's annual business plan and long-term development programs.

CHIEF ACCOUNTANT OF THE COMPANY

The Chief Accountant of the Company exercises the rights and obligations defined for the Chief Accountant by the

գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

- 11.2. Ընկերության Գլխավոր հաշվապահի գործառույթները սահմանվում են Ընկերության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների ստորաբաժանման կանոնակարգով:
- 11.3. Ընկերության Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել տնօրենին կամ այլ անձի:
- 11.4. Ընկերության Գլխավոր հաշվապահը Խորհրդին և տնօրենին է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ համապատասխանաբար Խորհրդի և տնօրենի կողմից որոշված պարբերականությամբ:
- 11.5. Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների արժանահավատության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն Կանոնադրությանը համապատասխան:

12. ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ

- 12.1 Ընկերությունը կարող է ունենալ Վերստուգող հանձնաժողով, այդ թվում Հանձնաժողովի նախագահ և անդամներ, կամ Վերստուգող, որոնք ընտրվում են ժողովի կողմից՝ 3 (երեք) տարի ժամկետով և հաշվետու են Ժողովին և Խորհրդին:
- 12.2 Վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը) կատարում է հետևյալ գործառույթները.
- 12.2.1. հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը,
- 12.2.2. հսկողություն է իրականացնում Ընկերության ընթացիկ գործունեության և գործառնական ռիսկերի նկատմամբ,

Law of the Republic of Armenia on Accounting.

The functions of the Chief Accountant of the Company are determined by the regulations of the Company's accounting and reporting department.

The rights and obligations of the Chief Accountant of the Company cannot be delegated to the Director or any other person.

The Chief Accountant of the Company submits financial reports to the Board and the Director at the frequency determined by the Board and the Director, respectively.

The Chief Accountant of the Company is responsible for maintaining the Company's accounting records, their condition and accuracy, the timely submission of the annual report, financial and statistical reports to state authorities as required by law and other legal acts, as well as for the reliability of the financial information provided about the Company to shareholders, creditors, the press, and other mass media, in compliance with the law, other legal acts, and this Charter.

CONTROLLER

The Company may have a Control Committee, including a chairman and members, or a Controller, who are elected by the Meeting for a term of three (3) years and are accountable to the Meeting and the Board.

The Control Committee (Controller) performs the following functions:

Monitors the implementation of the decisions of the Company's governing bodies, verifies the compliance of the Company's documents with laws, other legal acts, and the Charter.

Exercises control over the Company's ongoing activities and operational risks.

- 12.2.3. հսկողություն է իրականացնում Ընկերության տնօրենի, տնօրենի տեղակալների, գլխավոր հաշվապահի, տարածքային (առանձնացված) և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների կողմից օրենքների, այլ իրավական ակտերի և Ընկերության ներքին իրավական ակտերի, տնօրենին տրված հանձնարարականների կատարման նկատմամբ,
- 12.2.4. եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Ընկերության Խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջադրված հարցերի վերաբերյալ,
- 12.2.5. իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում,
- 12.2.6. պարտադիր կարգով անց է կացնում Ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների ստուգում՝ մինչև դրանց հաստատումը ժողովի կողմից,
- 12.2.7. իրականացնում է Օրենքով և (կամ) ժողովի կողմից սահմանված այլ գործառնություններ,
- 12.3 Վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը) պարտավոր է կատարել ժողովի և Խորհրդի հանձնարարականները: Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) աշխատանքի կարգը սահմանում է Ժողովը: Վերստուգող հանձնաժողովի (Վերստուգողի) հետ հարաբերություններում Ժողովին և Խորհրդին կարող են տրվել նմանատիպ իրավասություններ, եթե Օրենքով դրանք Ժողովին կամ Խորհրդին բացառիկ իրավասությունները չեն:

Monitors the compliance of the Company's Director, deputy directors, chief accountant, and the heads and employees of territorial (separated) and structural subdivisions with laws, other legal acts, the Company's internal legal acts, and execution of the instructions given to the Director.

Provides conclusions and recommendations regarding issues submitted by the Board, as well as those raised on its own initiative.

Conducts inspections of the Company's financial-economic activities.

Conducts mandatory audits of the Company's annual reports and accounting balances before their approval by the General Meeting.

Performs other functions as defined by law and/or the Meeting.

The Control Committee (Controller) is obliged to fulfill the assignments of the Meeting and the Board. The procedure for the operation of the Control Committee (Controller) is determined by the Meeting. The Meeting and the Board may be granted similar powers in relation to the Control Committee (Controller), unless the Law reserves exclusive powers for the Meeting or the Board.

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

- 13.1. Ընկերության տնօրինությունը (այսուհետ՝ «Տնօրինություն») հանդիսանում է Ընկերության Խորհրդատվական մարմինը:
- 13.2. Տնօրինությունը՝
- 13.2.1. Օժանդակում է Ընկերության գործունեությանը, արդյունավետ կառավարմանը, կարևոր նշանակություն ունեցող որոշումների ընդունմանը:
- 13.3. Ընկերության Տնօրինության առնչվող ցանկացած հարցի այդ թվում նաև Տնօրինության անդամների նշանակմանը, նրանց քանակական կազմին, պաշտոնավարման ժամկետներին, վարձատրությանը և գործառնություններին առնչվող հարցերի վերաբերյալ ցանկացած որոշումները քննարկվում և ընդունվում են Ժողովի կողմից:

COMPANY'S MANAGEMENT

The Company's Management (hereinafter referred to as the "Management ") serves as the Company's advisory body.

The Management Board:

Supports the Company's activities, effective management, and the decision-making process for important decisions.

Any matters related to the Company's Management, including the appointment of its members, the number of members, terms of office, remuneration, and functions, are discussed and decided by the Meeting.

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏԱՅԻՆ ՍՏՈՒՂՈՒՄԸ

14.1. Յուրաքանչյուր տարի Ընկերության գործունեությունը ստուգվում է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անկախ աուդիտորական կազմակերպության կողմից, որին հաստատում է Ընկերության ժողովը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի նախագահը:

14.2. Անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը Ընկերությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում:

15. ՀԱԾՎԱԳԱՀԱԿԱՆ ՀԱԾՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15.1. Ընկերության գործառնական տարին սկսվում է հունվարի 1-ին և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին:

15.2. Ընկերության գործունեության արդյունքներն արտացոլվում են Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում՝ վերջինիս կողմից սահմանված պարբերականությամբ, ձևերով և կարգով:

15.3. Ընկերության հաշվապահական հաշվառման վարումը և ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է հաշվապահական հաշվառման մասին օրենսդրությամբ նախատեսված կանոններին և սկզբունքներին համապատասխան:

15.4. Ընկերությունը կազմում և հրապարակում է տարեկան, եռամսյակային և այլ ֆինանսական հաշվետվություններ՝ Կենտրոնական բանկի և ՀՀ Կառավարության լիազորված մարմնի կողմից համաձայնեցված կարգով:

15.5. Ընկերությունը ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեցամսյա ժամկետում, մամուլում հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտորական եզրակացությունը:

15.6. Ընկերությունը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը հրապարակում է իր եռամսյակային ֆինանսական հաշվետվությունները:

15.7. Ընկերությունը պարբերաբար հրապարակում է իր գործունեության վերաբերյալ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի սահմանած կարգով և հաճախականությամբ:

COMPANY'S AUDIT

The Company's activities are audited each year by an independent auditing organization that is authorized to conduct audit activities, which appointment is approved by the Meeting of the Company. The contract with the auditor is signed by the Chairman of the Board.

The Company submits the independent auditing organization's report to the Central Bank within six months after the end of the financial year.

ACCOUNTING AND REPORTING

The Company's fiscal year begins on January 1 and ends on December 31 of the same year.

The Company's operational results are reflected in reports submitted to the Central Bank in accordance with the frequency, formats, and procedures established by the latter.

The Company's accounting and financial reporting are conducted in accordance with the rules and principles set forth by accounting legislation.

The Company prepares and publishes annual, quarterly, and other financial reports in accordance with the procedure agreed upon by the Central Bank and the authorized body of the Government of the RA.

The Company publishes its annual financial statements and the auditor's report in the press within six months after the end of the financial year,

The Company publishes its quarterly financial reports by the 15th day of the month following each quarter.

The Company periodically publishes information about its activities in accordance with the procedure and frequency set by the Central Bank.

16. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

TERMINATION OF THE COMPANY'S ACTIVITIES

- 16.1. Ընկերության գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
- 16.2. Ընկերությունը կարող է լուծարվել նրա լիցենզիան անվավեր ճանաչելու, ուժը կորցրած ճանաչելու, «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում, Ընկերության ժողովի որոշմամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:
- 16.3. Ընկերությունը կարող է լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

The Company's activities are terminated in cases and in accordance with the procedures established by law.

The Company may be liquidated in case its license is declared invalid or revoked, in cases specified by the Law of the Republic of Armenia on the Insolvency of Banks, Credit Organizations, Investment Companies, Investment Fund Managers, and Insurance Companies by a decision of the Company's Meeting, as well as on other grounds provided by Armenian legislation.

The Company may be liquidated in accordance with the procedures and cases established by the legislation of the Republic of Armenia.